2021, № 3, 31-43 *Միջազգային հարաբերություններ*
https://doi.org/10.46991/BYSU:D/2021.12.3.031

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՅԱՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ (1995-2021 ԹԹ.)

ԺԱԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

1991 թ. Հարավային Կովկասի երեք հանրապետությունների անկախությունից հետո էլ այս տարածաշրջանը շարունակում է Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) համար առաջնային նշանակություն ունենալ: ՌԴ-ին սահմանակից լինելը ավելի է մեծացնում Հարավային Կովկասի ռազմաքաղաքական նշանակությունը, քանի որ այստեղ տեղի ունեցող զարգացումները ուղղակիորեն ազդեցություն են գործում ՌԴ-ի տարածաշրջանային անվտանգության վրա:

Այդ իսկ պատճառով ՌԴ-ի ռազմաքաղաքական ղեկավարությունը ԽՍՀՄ փլուզումից հետո կարևորեց հարաբերությունները հարավկովկասյան հանրապետությունների հետ և մշտապես ձգտում է այս տարածաշրջանում ունենալ թե՛ ռազմաքաղաքական, թե՛ տնտեսական առավելագույն ներկայություն: Սակայն հարավկովկասյան հանրապետությունների արտաքին քաղաքականության առաջնահերթությունների, տարածաշրջանում հակամարտությունների և այլ զարգացումների պատճառով ՌԴ-ի հարաբերությունները նրանց հետ նույն կերպ չկառուցվեցին, որն էլ իր ազդեցությունը թողեց նորանկախ այս պետությունների և ՌԴ-ի միջև ռուսաստանյան ռազմականներին վերաբերող իրավապայմանագրային հենքի (տեղակայման ժամկետներ, կարգավիճակ, գործառույթներ) ձևավորման վրա:

Սույն հոդվածում քննության են առնվում թե՛ այդ գործոնները և թե՛ ռուսաստանյան ռազմականների իրավապայմանագրային հենքին առնչվող մի շարք հարցեր:

Բանալի բառեր – *Հարավային Կովկաս, ՀԱՊԿ, ռուսաստանյան ռազմական, պայմանագիր, արձանագրություն, անվտանգություն, ինքնիշխանություն*

102-րդ ռուսաստանյան ռազմականը Հայաստանի Հանրապետությունում

ՌԴ-ի հետ ռազմաքաղաքական սերտ հարաբերությունների հաստատումը անկախության առաջին ամիսներից ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի համար առաջնային դարձավ: ՀՀ-ում ռուսաստանյան ռազմական տեղակայելու անհրաժեշտության մասին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը հայտարարեց դեռևս 1992 թ.փետրվարի 1-ին «Իզվեստիա» թերթին տված հարցազրույցում[1]:

[1] Տե՛ս **Լ. Տեր-Պետրոսյան,** Ընտրանի: Ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ, Եր., 2006, էջ 264:

Հետագան ցույց տվեց, որ այս հարցում երկու պետությունների շահերը միանգամայն համընկնում են։ ՀՀ-ն առաջինն էր հարավկովկասյան հանրապետություններից, որտեղ ԽՍՀՄ փլուզումից հետո գտնվող ՌԴ զինված ուժերի զինվորական կազմավորումները՝ համաձայն 1995 թ. մարտի 16-ի՝ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին պայմանագրի, վերակազմավորվեցին Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի (հոդվ. 2)[2]։

Այս պայմանագրի 3-րդ հոդվածի համաձայն.

«…ռուսաստանյան ռազմակայանը ՀՀ տարածքում գտնվելու ընթացքում, բացի ՌԴ-ի շահերի պաշտպանության գործառույթներից, ՀՀ զինված ուժերի հետ համատեղ ապահովում է ՀՀ անվտանգությունը՝ նախկին ԽՍՀ Միության արտաքին սահմանով ։

Ռուսաստանյան ռազմակայանի ռազմական կազմավորումների կիրառումն իրականացվում է կողմերի փոխադարձ պայմանավորվածությունների, 1992 թ. մայիսի 15-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի, 1991 թ. դեկտեմբերի 29-ի՝ ՀՀ-ի և ՌԴ-ի միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության մասին պայմանագրի հիման վրա և կողմերի օրենսդրությանը համապատասխան»[3]։

ՀՀ-ում ռուսաստանյան ռազմակայանի տեղակայումով պաշտոնական Երևանը առաջին հերթին ապահովագրվեց Թուրքիայի Հանրապետությունից սպառնացող ռազմական ներխուժման իրական վտանգից[4]։ Երկրորդ՝ այն հնարավորություն տվեց կարգավորելու ՀՀ զինված ուժերի սպառազինության մատակարարման հետ կապված մի շարք խնդիրներ[5]։

Սակայն ՌԴ-ն 1990-ական թթ. առաջին կեսին Հարավային Կովկասի հանրապետությունների նկատմամբ հստակ մշակված քաղաքականություն չուներ, ուստի տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումներից ելնելով՝ ՌԴ ռազմաքաղաքական ղեկավարությունը հընթացս խմբագրում էր նաև իր քաղաքականությունը այս տարածաշրջանում։

Այսպես, 1995 թ. մարտի 16-ի պայմանագրում նշված 1991 թ. դեկտեմբերի 29-ի՝ ՀՀ-ի և ՌԴ-ի միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության մասին պայմանագիրը, ռազմաքաղաքական հանգամանքներից ելնելով, այդպես էլ չվավերացվեց,

---

[2] Տե՛ս «Договор между Российской Федерацией и Республикой Армения о российской военной базе на территории Республики Армения», https://www.szrf.ru/szrf/doc.php?nb=102&issid=1022005009000&docid=3 (մուտք՝ 30.07.2021 թ.)։

[3] Նույն տեղում։

[4] Թուրքիայի կողմից ՀՀ ռազմական ներխուժման հավանականությանը անդրադարձել է նաև ՀՀ-ում Հունաստանի նախկին դեսպան Լեոնիդաս Խրիսանտոպուլոսը, տե՛ս **Chrysanthopoulos Leonidas T.,** Caucasus Chronicles:Nation-Building and Diplomacy in Armenia, 1993-1994, Princeton and London, 2002, էջ 78։

[5] Այս մասին տե՛ս «Սա 20 տարի հետո կցուցադրեք». Լևոն Տեր-Պետրոսյան, https://www.youtube.com/watch?v=iSPeOTbn57Y (մուտք՝ 15.08.2021 թ.)։

փոխարենը 1997 թ. օգոստոսի 29-ին ստորագրվեց ՀՀ-ի և ՌԴ-ի միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագիրը, որը ՀՀ նախագահ Լ. Տեր–Պետրոսյանը բնութագրեց «…մի կարգ բարձր 1991-ին ստորագրված պայմանագրից, որն ավելի շուտ ջերմ հարաբերությունների արտահայտություն էր»[6]:

Վերոնշյալ գործընթացով պայմանավորված՝ 2003 թ. նոյեմբերի 11-ին Երևանում ստորագրվեց 1995 թ. մարտի 16-ի՝ ՀՀ-ի և ՌԴ-ի միջև ՀՀ տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին պայմանագրի մեջ փոփոխություն կատարելու մասին թիվ 4 արձանագրությունը, որտեղ 1995 թ. մարտի 16-ին ստորագրված՝ ՀՀ-ի և ՌԴ-ի միջև ՀՀ տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին պայմանագրի 3-րդ հոդվածի 3-րդ պարբերության՝ 1991 թ. դեկտեմբերի 29-ին ստորագրված՝ ՀՀ-ի և ՌԴ-ի միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության մասին պայմանագիրը վկայակոչող դրույթները փոխարինվեցին 1997 թ. օգոստոսի 29-ին ստորագրված՝ ՀՀ-ի և ՌԴ-ի միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագիրը վկայակոչող դրույթներով[7]:

Այս արձանագրությունը ստորագրելուն հաջորդած ժամանակահատվածում տեղի ունեցան մի շարք գործընթացներ, որոնք ռազմաքաղաքական նոր իրավիճակ ստեղծեցին Հարավային Կովկասում: Նախ՝ Ադրբեջանի կողմից մեծածավալ սպառազինությունների ձեռքբերումը ստիպեց ՀՀ-ի ղեկավարությանը անվտանգության ապահովման նոր միջոցներ ձեռնարկել:

Երկրորդ՝ 2007 թ. ավարտվեց Վրաստանից ռուսաստանյան ռազմակայանները դուրս բերելու գործընթացը:

Երրորդ՝ 2008 թ. օգոստոսյան հնգօրյա պատերազմից հետո ՌԴ-ն կովկասյան տարածաշրջանում իր դիրքերը ամրապնդելու նոր քայլեր էր ձեռնարկում:

Չորրորդ՝ ՀԱՊԿ հավաքական անվտանգության համակարգի ձևավորման ուղությամբ որոշակի գործընթացներ էին տեղի ունենում:

Կարծում ենք՝ հիմնականում այս գործոնները նպաստեցին, որ 2010 թ. օգոստոսի 20-ին Երևանում ստորագրվի 1995 թ. մարտի 16-ի՝ ՀՀ-ի և ՌԴ-ի միջև ՀՀ տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին պայմանագրի մեջ փոփոխություն կատարելու թիվ 5 արձանագրությունը, որով վերախմբագրվեցին պայմանագրի 3-րդ և 26-րդ հոդվածները՝ ընդլայնելով կողմերի միջև համագործակցությունը: Մասնավորապես 3-րդ հոդվածով նախատեսվում է.

---

[6] **Լ. Տեր-Պետրոսյան,** նշվ. աշխ., էջ 577:

[7] Տե՛ս «Протокол № 4 между Российской Федерацией и Республикой Армения о внесении изменения в Договор между Российской Федерацией и Республикой Армения о российской военной базе на территории Республики Армения от 16 марта 1995 года», https://szrf.ru/szrf/doc.php?nb=102&issid=1022006011000&docid=10, նաև՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=4790 (մուտք՝ 12.08.2021 թ.):

- ռուսաստանյան ռազմակայանը ՀՀ տարածքում գտնվելու ընթացքում, բացի ՌԴ շահերի պաշտպանության գործառույթներից, ՀՀ զինված ուժերի հետ համատեղ ապահովում է ՀՀ անվտանգությունը.

- նշված նպատակներին հասնելու համար ռուսաստանյան կողմն աջակցում է ՀՀ-ին ապահովելու ժամանակակից և համատեղելի սպառազինությամբ, ռազմական (հատուկ) տեխնիկայով:

Իսկ 26-րդ հոդվածի վերախմբագրման արդյունքում պայմանագրի գործողության ժամկետը սահմանվեց քառասունինը տարի (նախկին 25 տարվա փոխարեն- Ժ.Մ.), որը և ինքնաբերաբար երկարաձգվում է իրար հաջորդող հնգամյա ժամանակաշրջանների համար, եթե կողմերից ոչ մեկը հերթական ժամանակաշրջանի ավարտից առնվազն 6 ամիս առաջ գրավոր չի ծանուցում մյուս կողմին դրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին: Պայմանագրի դրույթները կարող են վերանայվել կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ և փոխադարձ համաձայնությամբ[8]:

Կարևորելով 2010 թ. ստորագրված թիվ 5 արձանագրությունը՝ ընդգծենք մի կարևոր հանգամանք ևս. 2001 թվականի մայիսի 25-ին Երևանում ստորագրված՝ 1992 թվականի մայիսի 15-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի (ՀԱՊ) մասնակից պետությունների հավաքական անվտանգության համակարգի ուժերի և միջոցների կազմավորման և գործառության կարգի մասին արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ ՀԱՊ-ի մասնակից պետությունները հավաքական անվտանգության համակարգի ուժերի և միջոցների կազմում կազմավորում են զորքերի (ուժերի) կոալիցիոն (տարածաշրջանային) խմբավորումներ և դրանց կառավարման մարմիններ:

Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանի զորքերի խմբավորումը կազմավորվում է Հայաստանի և Ռուսաստանի միջև երկկողմ համաձայնագրերի հիման վրա[9]: Քանի որ ՀՀ-ում ռուսաստանյան ռազմակայանի մասին պայմանագիրը գործում է նաև ՀԱՊ-ի հիման վրա, ապա, փաստորեն, 1995 թ. մարտի 16-ի՝ ՀՀ-ի և ՌԴ-ի միջև ՀՀ տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին պայմանագրով նախատեսված կողմերի միջև համագործակցությունը որոշակիորեն ընդլայնվել էր արդեն ՀԱՊ-ի մասնակից պետությունների երևանյան վերոնշյալ արձանագրությամբ[10]:

---

[8] Տե՛ս «Протокол № 5 между Российской Федерацией и Республикой Армения о внесении изменения в Договор между Российской Федерацией и Республикой Армения о российской военной базе на территории Республики Армения от 16 марта 1995 г.», https://www.szrf.ru/szrf/doc.php?nb=102&issid=1022012003000&docid=15, նաև՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=65694 (մուտք՝ 30.08.2021):

[9] Տե՛ս «Протокол о порядке формирования и функционирования сил и средств системы коллективной безопасности государств-участников Договора о коллективной безопасности от 15 мая 1992 года», https://www.szrf.ru/szrf/doc.php?nb=102&issid=1022007002000&docid=2 (մուտք՝ 29.08.2021):

[10] Այս արձանագրության գործողությունը դադարեցվել է 2012 թ. հուլիսի 27-ին՝ 2010 թ. դեկտեմբերի 10-ին Մոսկվայում ստորագրված՝ «Հավաքական անվտանգության մասին

ՀՀ-ում ռուսաստանյան ռազմակայանին առնչվող իրավապայմանագրային հենքի վերլուծությունը ցույց է տալիս, որ այս հարցում երկու պետությունների միջև ռազմաքաղաքական համագործակցությունը մի շարք դեպքերում երկկողմ և բազմակողմ մակարդակներում (նկատի ունենք ՀԱՊԿ շրջանակում) խաչաձևվում է: Մյուս կողմից, 102-րդ ռազմակայանի և ՀՀ զինված ուժերի միջև փաստացի փոխգործակցության առկայության պայմաններում իրավական առումով 102-րդ ռուսաստանյան ռազմակայանը միավորված չէ ՀՀ զինված ուժերի որևէ կազմավորման հետ[11]: Նշվածի օրինակ է 2016 թ. նոյեմբերի 30-ին Մոսկվայում ստորագրված ՀՀ-ի և ՌԴ-ի միջև՝ ՀՀ զինված ուժերի և ՌԴ զինված ուժերի զորքերի (ուժերի) Միացյալ խմբավորման մասին համաձայնագիրը, որի 4-րդ հոդվածում ամրագրված է. «Միացյալ խմբավորման կազմը սահմանում են Լիազորված մարմինները ռազմաքաղաքական իրավիճակի համատեղ վերլուծության և համաձայնեցված եզրահանգումների հիման վրա՝ հաշվի առնելով հնարավոր սպառնալիքների ուղղվածությունը և զորքերի (ուժերի) կիրառման ընդհանուր մտահղացման հիման վրա»[12]: Այս համաձայնագրում Միացյալ խմբավորման կազմում 102-րդ ռազմակայանի ներգրավման մասին թեև նշված չէ, այնուհանդերձ 2021 թ. հոկտեմբերի 22-ին մեկնարկած ՀՀ-ի և ՌԴ-ի զորքերի (ուժերի) Միացյալ խմբավորման մարտավարական զորավարժություններին մասնակցում էին ՀՀ զինված ուժերի հատուկ բանակային կորպուսի և 102-րդ ռազմակայանի ուժեղացված ստորաբաժանումները[13]:

2020 թ. 44-օրյա պատերազմից հետո Հարավային Կովկասը ռազմաքաղաքական ձևափոխման նոր փուլ է մտել, և ՀՀ անվտանգության ապահովման առումով ակնհայտ է, որ ռուսաստանյան ռազմակայանի նշանակությունը ավելի է մեծացել, ինչի մասին են վկայում հետևյալ փաստերը. 2021 թ. մայիսի 5-ին ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանը ԱԺ-ում հայտնեց, որ ՀՀ Սյունիքի մարզում 102-րդ ռազմակայանի 2 նոր հենակետ է տեղակայվել[14], իսկ հունիսի 12-ին ՀՀ-ում ՌԴ դեսպանը հայտնեց, որ

պայմանագրի կազմակերպության՝ հավաքական անվտանգության համակարգի ուժերի և միջոցների կազմավորման և գործունեության կարգի մասին» համաձայնագիր ուժի մեջ մտնելուց հետո, մանրամասն տե՛ս «Соглашение о порядке формирования и функционирования сил и средств системы коллективной безопасности Организации Договора о коллективной безопасности», https://szrf.ru/szrf/doc.php?nb=102&issid=1022013005000&docid=9 (մուտք՝ 29.08.2021):

[11] Տե՛ս **Храмчихин А.** Кому нужнее российская военная база в Гюмри. Выгоден ли Ереван союз с Москвой, https://www.ng.ru/armies/2018-0827/ 7_7297_armenia.html (մուտք՝ 25.08.2021):

[12] «Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի զորքերի (ուժերի) Միացյալ խմբավորման մասին», http://www.parliament.am/draft_docs6/K-092_hamadzaenagir.pdf (մուտք՝ 30.08.2021):

[13] Տե՛ս «Հայաստանում մեկնարկել են հայ-ռուսական միացյալ զորախմբի մարտավարական զորավարժությունները», https://armeniasputnik.am/20211022/hajastanum-eknarkel-en-miacjal-zorakhmbi-martavarakan-zoravarzhutjunnery-34558886.html (մուտք՝ 23.10.2021):

[14] Տե՛ս «Սյունիքի մարզում 102-րդ ռուսական ռազմաբազայի երկու նոր հենակետ է տեղակայվել. Փաշինյան», https://www.pastinfo.am/hy/news/2021/05/03/4j5puq664/1195213 (մուտք՝ 25.08.2021):

Ռուսաստանն ուժեղացրել է իր ներկայությունը Սյունիքի մարզում[15]:

2021 թ. օգոստոսի 11-ին Մոսկվայում ՀՀ պաշտպանության նախարար Ա. Կարապետյանի հետ հանդիպման ժամանակ ՌԴ պաշտպանության նախարար Ս. Շոյգուն նշեց, որ Հայաստանի տարածքում է գտնվում 102-րդ ռազմակայանը, որը լավ հագեցած է և անվտանգության երաշխավոր է[16]:

Կարծում ենք՝ Ս. Շոյգուի այս հայտարարությունը զգուշացում էր ՀՀ-ի դեմ ագրեսիայի դեպքում 102-րդ ռազմակայանի ներուժը գործողության մեջ դնելու մասին: Չափազանցած չենք լինի, եթե նշենք, որ 2021 թ. Ադրբեջանի ռազմական գործողությունները Գեղարքունիքի և հատկապես Սյունիքի մարզերում ՀՀ-ի դեմ լայնածավալ ագրեսիայի չվերածվեցին նաև այն պատճառով, որ 102-րդ ռազմակայանի իրավապայմանագրային հենքը հնարավորություն է տալիս ռուսաստանյան ռազմակայանի ուժերին անմիջապես ներգրավվելու ՀՀ-ի դեմ հնարավոր ագրեսիան հետ մղելու գործին: Իհարկե, հաշվի առնելով ՀՀ-ի դեմ իրական սպառնալիքները նաև Թուրքիայի կողմից, ակնհայտ է, որ ռուսաստանյան ռազմակայանի ներուժը բավարար չէ հնարավոր լայնածավալ ագրեսիան հետ մղելու համար, սակայն դրա ներկայությունը այս պարագայում, ռազմականից բացի, ունի նաև քաղաքական նշանակություն, քանի որ հարձակումը 102-րդ ռազմակայանի վրա նշանակում է նաև ագրեսիա ՌԴ-ի դեմ:

Ռուսաստանյան ռազմակայանները Վրաստանում

1995 թ. սեպտեմբերի 15-ին ՌԴ-ի և Վրաստանի միջև վերջինիս տարածքում ռուսաստանյան ռազմակայանների մասին պայմանագիր ստորագրվեց, ըստ որի՝ Վրաստանի Հանրապետության տարածքում տեղակայված ռուսաստանյան ռազմական կազմավորումները սույն պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից կազմակերպչականորեն անցնում են ռուսաստանյան ռազմակայանների համակարգին, որոնք կտեղակայվեն Ախալքալակ, Բաթում, Վազիանի, Գուդաուտա և այլ քաղաքներում (հոդվ. 2)[17]:

Ռուսաստանյան ռազմակայանները Վրաստանի Հանրապետութ-

---

[15] Տե՛ս «Սյունիքում ռուսական ռազմական ներկայությունն ուժեղացված է. Կոպիրկին», https://armeniasputnik.am/politics/20210612/27896967/syuniqum-rusakan-razmakan-nerkayutyunn-ujexacvac-e-kopirkin.html (մուտք՝ 25.08.2021):

[16] Տե՛ս «Министр обороны России провел в Москве переговоры с армянским коллегой», https://function.mil.ru/news_page/country/more.htm?id=12376659@egNews (մուտք՝ 25.08.2021):

[17] Տե՛ս «Договор между Российской Федерацией и Республикой Грузия о российских военных базах на территории Республики Грузия», https://www.mid.ru/foreign_policy/international_contracts/2_contract/-/storage-viewer/bilateral/page-1/47960?_storageviewer_WAR_storageviewerportlet_advancedSearch=false&_storageviewer_WAR_storageviewerportlet_keywords=%D0%B4%D0%BE%D0%B3%D0%BE%D0%B2%D0%BE%D1%80+%D0%BE+%D1%80%D0%BE%D1%81%D1%81%D0%B8%D0%B9%D1%81%D0%BA%D0%B8%D1%85+%D0%B2%D0%BE%D0%B5%D0%BD%D0%BD%D1%8B%D1%85+%D0%B1%D0%B0%D0%B7%D0%B0%D1%85&_storageviewer_WAR_storageviewerportlet_fromPage=search&_storageviewer_WAR_storageviewerportlet_andOperator=1 (մուտք՝ 14.08.2021)

յան տարածքում գտնվելու ընթացքում Վրաստանի Հանրապետության զինված ուժերի հետ համատեղ ապահովում են Վրաստանի Հանրապետության և ՌԴ-ի ինքնիշխանության և անվտանգության պաշտպանությունը (հոդվ. 3)[18]:

Ռուսաստանյան կողմը չի օգտագործի ռազմականյանները սույն պայմանագրին չհամապատասխանող նպատակներով և Վրաստանի Հանրապետության պետական շահերի դեմ ուղղված գործունեություն իրականացնելու համար (հոդվ. 4):

Պայմանագիրը գործելու էր 25 տարի՝ հաջորդ հնգամյա շրջանով երկարաձգվելու հնարավորությամբ (հոդվ. 40)[19]:

Սակայն, ի տարբերություն ՀՀ-ի, Վրաստանի իշխանությունները ՀԱՊ-ի և ընդհանրապես ԱՊՀ շրջանակում չէին տեսնում իրենց երկրի անվտանգության ապահովման հեռանկարները, մանավանդ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ Վրաստանը անդամակցեց ԱՊՀ-ին և մասնակից դարձավ ՀԱՊ-ին Աբխազիայի և Հարավային Օսիայի հակամարտությունները իր օգտին լուծելու նպատակով:

Վրաստանի իշխանությունները Հարավային Կովկասի ապագա անվտանգության համակարգը տեսնում էին առանց ՌԴ մասնակցության: Այս քաղաքականության արտահայտությունն էր այն փաստը, որ Վրաստանը 1999 թ. դուրս եկավ ՀԱՊ-ից:

Նման քայլը որոշակիորեն փոխեց Վրաստանում գտնվող ռուսաստանյան ռազմականյանների ներկայության տրամաբանությունը, քանի որ այն այլևս ՌԴ-ի կողմից ղեկավարվող հավաքական անվտանգության համակարգի մաս չէր: Ճիշտ հակառակը. Վրաստանի հետաքրքրությունը արևմտյան անվտանգային համակարգերի նկատմամբ և համագործակցությունը ՎՈՒԱՄ-ի շրջանակում բացառում էին ՌԴ-ի հետ ռազմաքաղաքական երկկողմ կամ բազմակողմ ինտեգրացիան: Այդ պատճառով էլ Վրաստանի իշխանությունները իրենց քաղաքականությունը անվտանգության ոլորտում կառուցեցին ոչ թե ռուսաստանյան ռազմականյանների ներգրավմամբ, այլ հակառակը՝ երկրի տարածքից դրանց շուտափույթ դուրսբերումը համարում էին իրենց ինքնիշխանության և անվտանգության մակարդակի բարձրացում:

1999 թ. նոյեմբերի 17-ի ԵԱՀԿ Ստամբուլի գագաթնաժողովին ՌԴ-Վրաստան հայտարարությամբ[20] սկսվեց Վրաստանի տարածքից ռուսաստանյան ռազմականյանների դուրսբերման իրավական գործընթացը, որը խորացրեց լարվածությունը այդ պետությունների հարաբերություններում:

Կողմերի միջև լարվածությունը թուլացնելու համար 2005 թ. մայիսի

---

[18] Տե՛ս նույն տեղը:

[19] Տե՛ս նույն տեղը:

[20] Տե՛ս «Совместное заявление Российской Федерации и Грузии», https://www.osce.org /files/f/documents/0/e/14118.pdf (մուտք՝ 17.08.2021):

30-ին ՌԴ-ի և Վրաստանի արտաքին գործերի նախարարները ստորագրեցին համատեղ հայտարարություն, որն ըստ էության Վրաստանից ռուսաստանյան ռազմակայանների դուրսբերման ժամանակացույց էր[21]:

2006 թ. մարտի 31-ին ՌԴ-ի և Վրաստանի միջև Սոչիում ստորագրված համաձայնագրով կողմերը պայմանավորվեցին 2008 թ. ընթացքում ավարտել Վրաստանի տարածքից ռուսաստանյան ռազմակայանների և ռազմական օբյեկտների դուրսբերումը[22]:

Արդեն 2007 թ. նոյեմբերի 16-ին ՌԴ ԱԳՆ-ն հայտարարեց, որ նոյեմբերի 15-ին ռուսաստանյան ռազմակայանի վերջին շարասյունը դուրս է բերվել Բաթումից[23]: Մի քանի օր անց՝ նոյեմբերի 21-ին, ՌԴ ԱԳՆ-ն հանդես եկավ նոր, ծավալուն հայտարարությամբ՝ նշելով, որ ՌԴ-ն կատարել է 1999 թ. նոյեմբերի 17-ի հայտարարությամբ ստանձնած պարտավորությունները: ՌԴ ԱԳՆ-ն հայտնում էր, որ մինչև 2000 թ. դեկտեմբերի 31-ը Վրաստանի տարածքում գտնվող ռուսաստանյան սովորական սպառազինությունը և տեխնիկան կրճատվել էին համաձայնեցված չափով, իսկ մինչև 2001 թ. հուլիսի 1-ը լուծարվել և դուրս էին բերվել Վազիանիի և Գուդաուտայի ռուսաստանյան ռազմակայանները:

ՌԴ ԱԳՆ-ն վրացական կողմին մեղադրեց նաև մի շարք պարտավորություններ չկատարելու մեջ՝ մասնավորապես նշելով, որ վրացական կողմը հրաժարվել է Բաթումի նախկին ռազմակայանի ենթակառուցվածքների մի մասի հիման վրա ռուս-վրացական հակահաբեկչական կենտրոն ստեղծելուց (այն նախատեսված էր 2006 թ. մարտի 31-ի Սոչիի համաձայնագրի 20-րդ հոդվածով): Մեղադրանքների շարքին էին պատկանում Վրաստանի կողմից հնչող հակառուսական հռետորաբանությունը, ստամբուլյան պարտավորությունները չկատարելը՝ մասնավորապես ռուսաստանյան ռազմակայանների կրճատման և դուրսբերման համար պայմաներ չստեղծելը և այլն:

ՌԴ ԱԳՆ-ն հիշեցնում էր նաև, որ «վրաց-աբխազական և վրաց-օսական հակամարտությունների գոտիներում շարունակում են ծառայություն իրականացնել ռուս խաղաղապահները՝ այդ շրջաններում անդորրը պաշտպանողները: Հենց նրանք են այն գլխավոր խոչընդոտը նրանց համար, ովքեր խաղաղասիրության հռետորաբանության քողի տակ շարունակում են ռազմական արկածախնդրություն պատրաստել

---

[21] Տե՛ս «Совместное заявление министров иностранных дел Российской Федерации и Грузии», https://www.mid.ru/ru/maps/ge/-/asset_publisher/uwHHxf8KDaOY/content/id/437172__(մուտք՝ 19.08.2021):

[22] Տե՛ս «Соглашение между Российской Федерацией и Грузией о сроках, о порядке временного функционирования и выводе российских военных баз и других военных объектов Группы российских войск в Закавказье, расположенных на территории Грузии», https://www.szrf .ru/szrf/doc.php?nb=102&issid=1022007004000&docid=6 (մուտք՝ 18.08.2021 թ.):

[23] Տե՛ս «Комментарий Департамента информации и печати МИД России в связи с завершением вывода российских военных баз из Грузии», https://www.mid.ru/ru/maps/ge/-/asset_publisher/uwHHxf8KDaOY/content/id/357274 (մուտք՝ 19.08.2021):

Աբխազիայում և Հարավային Օսիայում»[24]:

Այս հայտարարությամբ ՌԴ ԱԳՆ-ն արդեն նշում էր այն կարմիր գիծը, որից այն կողմ թույլ չէր տալու անցնել:

Ռուսաստանյան ռազմականայանների դուրսբերումից հետո Վրաստանի իշխանությունները սկսեցին Աբխազիայից և Հարավային Օսիայից ռուս խաղաղապահներին հեռացնելու ուղիներ փնտրել:

Պաշտոնական Թբիլիսին, կարծես ոգևորված ձեռք բերած հաջողությունից, ուժեղացրեց ճնշումը Աբխազիայի և Հարավային Օսիայի նկատմամբ: Ինչպես հայտնի է, լարվածության գագաթնակետը դարձավ 2008 թ. օգոստոսյան հնգօրյա պատերազմը Հարավային Օսիայում:

Վրաստանում գտնվող ռուսաստանյան ռազմականայանները կանխիչ դեր ունեին Աբխազիայում և Հարավային Օսիայում հակամարտությունը չվերսկսելու համար: Վրաստանից ռուսաստանյան ռազմականայանները դուրս բերելուց հետո ՌԴ-ի ռազմական ներկայությունը Հարավային Կովկասում էապես նվազեց:

Գաբալայի ռադիոտեղորոշումային կայանը Ադրբեջանի Հանրապետությունում

1993 թ. ՌԴ զինված ուժերի կազմավորումները դուրս բերվեցին Ադրբեջանի Հանրապետության տարածքից: ՌԴ-ի ռազմական ներկայությունը սահմանափակվեց միայն Գաբալայի ռադիոտեղորոշումային կայանում գտնվող համապատասխան մասնագետներով: Ոչ միայն Թուրքիայի գործոնով պայմանավորված, այլև արևմտյան կապիտալի ներհոսքը Ադրբեջան ապահովելու համար՝ մասնավորապես էներգետիկ ոլորտում, այս երկրի իշխանությունները Արևմուտքին ցանկանում էին հավաստիացնել, որ Ադրբեջանը ՌԴ-ի ռազմաքաղաքական ազդեցությունից դուրս է: Այս տրամաբանությամբ էին պայմանավորված նաև ՌԴ-ի հետ խորը ռազմական ինտեգրացիայի բացառումը և ՀԱՊ-ից դուրս գալու Ադրբեջանի իշխանությունների քաղաքականությունը:

2002 թ. հունվարի 25-ին ՌԴ-ի և Ադրբեջանի Հանրապետության միջև ստորագրվեց համաձայնագիր Գաբալայի ռադիոտեղորոշումային կայանի կարգավիճակի, օգտագործման սկզբունքների և պայմանների մասին, համաձայն որի՝ այն ստացավ տեղեկատվական-վերլուծական կենտրոնի կարգավիճակ և դարձավ Ադրբեջանի Հանրապետության սեփականությունը (հոդվ. 1):

Գաբալայի տեղեկատվական-վերլուծական կենտրոնը Ադրբեջանը ՌԴ-ին տրամադրեց վարձակալությամբ 10 տարով (հոդվ. 2):

Վարձակալության համար ՌԴ-ն տարեկան վճարելու էր 7 մլն ԱՄՆ դոլար (հոդվ. 3)[25]:

---

[24] «Комментарий ДИП МИД России в связи с окончанием вывода российских баз с территории Грузии», https://www.mid.ru/ru/maps/ge/-/asset_publisher/uwHHxf8KdaOY /ntent/d/ 356594 (մուտք՝ 20.08.2021):

[25] Տե՛ս «Соглашение от 25 января 2002 года между Российской Федерацией и Азер-

Տեղեկատվական-վերլուծական կենտրոնում աշխատող անձնակազմի թվաքանակը չպետք է գերազանցեր 1500-ը[26]:

2007 թ. ՌԴ նախագահ Վ. Պուտինը ԱՄՆ նախագահ Ջ. Բուշին առաջարկեց համատեղ օգտագործել Գաբալայի կայանը, սակայն ամերիկյան կողմը մերժեց[27]:

Ավելի ուշ ադրբեջանական կողմը Գաբալայի կայանի հետագա վարձակալության համար ՌԴ-ից պահանջեց 300 մլն ԱՄՆ դոլար, սակայն ռուսաստանյան կողմը չհամաձայնվեց և 2012 թ. դադարեցրեց Գաբալայի կայանի վարձակալումը[28]:

Այդ ընթացքում այս կայանը առանցքային դեր չունեցավ տարածաշրջանի ռազմաքաղաքական զարգացումներում:

7-րդ ռուսաստանյան ռազմակայանը Աբխազիայում

2008 թ. օգոստոսի 26-ին ՌԴ նախագահը ճանաչեց Աբխազիայի Հանրապետության անկախությունը[29]: Այս քայլին հաջորդեց երկկողմ իրավապայմանագրային հենքի ստեղծումը: 2009 թ. փետրվարի 1-ին Աբխազիայում և Հարավային Օսիայում կազմավորվեցին ռուսաստանյան ռազմակայաններ, իսկ 2010 թ. փետրվարի 17-ին Ռուսաստանի Դաշնության և Աբխազիայի Հանրապետության միջև վերջինիս տարածքում միացյալ ռուսաստանյան ռազմակայանի մասին համաձայնագիր ստորագրվեց:

Ըստ համաձայնագրի՝ միացյալ ռուսաստանյան ռազմակայանի ռազմական կազմավորումները Աբխազիայի Հանրապետության զինված ուժերի հետ համատեղ, երկու կողմերի այլ զորքերի, ռազմական կազմավորումների և մարմինների հետ փոխգործակցությամբ ապահովում են ՌԴ-ի և Աբխազիայի Հանրապետության ինքնիշխանությունը և անվտանգությունը (հոդվ. 4)[30]:

Այդ համաձայնագրի հետ անմիջականորեն առնչվում է 2015 թ. նոյեմբերի 21-ին ՌԴ-ի և Աբխազիայի Հանրապետության միջև ստորագրված՝ Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի և Աբխազիայի

байджанской Республикой о статусе, принципах и условиях использования Габалинской радиолокационной станции (РЛС “Дарьял”)», https://normativ.kontur.ru/document?moduleId=1&documentId=11623 (մուտք՝ 30.08.2021):

[26] Տե՛ս նույն տեղը:

[27] Տե՛ս «Путин предложил США совместное использование азербайджанской РЛС», https://lenta.ru/news/2007/06/07/rls/, նաև՝ Литовкин В. Габалу завлекают в турбизнес. Баку не знает, как распорядиться наследством, оставленным российской армией, https://www.ng.ru/columnist/2013-10-09/4_gabala.html (մուտք՝ 30.08.2021):

[28] Տե՛ս «Россия приостановила эксплуатацию Габалинской РЛС - МИД Азербайджана», https://ria.ru/20121210/914207019.html (մուտք՝ 30.08.2021), նաև՝ **Литовкин В.,** նշվ. աշխ.:

[29] Տե՛ս «Указ Президента Российской Федерации о признании Республики Абхазия», http://www.kremlin.ru/acts/bank/27957 (մուտք՝ 20.08.2021):

[30] Տե՛ս «Соглашение между Российской Федерацией и Республикой Абхазия об объединенной российской военной базе на территории Республики Абхазия», https:/www.szrf.ru/szrf/doc.php?nb=102&issid=1022010008000&docid=3 (մուտք՝ 25.08.2021):

Հանրապետության զինված ուժերի զորքերի (ուժերի) Միացյալ խմբավորման մասին համաձայնագիրը, որի համաձայն՝ ՌԴ-ի զինված ուժերի կողմից Միացյալ խմբավորման կազմում ներառված է Աբխազիայի Հանրապետության տարածքում տեղակայված միացյալ ռուսաստանյան ռազմակայանը (հոդվ. 4)[31]:

Աբխազիայում միացյալ ռուսաստանյան ռազմակայանը ամբողջովին ներգրավված է ՌԴ-ի կողմից ճանաչված այս հանրապետության անվտանգության ապահովման գործում:

2021 թ. սեպտեմբերին ռուսաստանյան մամուլում հրապարակված տեղեկությունների համաձայն՝ ՌԴ ռազմական գերատեսչությունում ընդունվել է սկզբունքային որոշում՝ արդիականացնելու 7-րդ ռուսաստանյան ռազմակայանը, որը ոչ միայն պաշտպանում է Աբխազիան և ապահովում է ՌԴ անվտանգությունը հարավային ուղղությամբ, այլ վերածվում է տարաշարժուն ռեզերվի Կովկասում և սևծովյան տարածաշրջանում[32]:

4-րդ ռուսաստանյան ռազմակայանը Հարավային Օսիայում

2008 թ. օգոստոսի 26-ին ՌԴ նախագահը ճանաչեց նաև Հարավային Օսիայի անկախությունը[33]: Ինչպես Աբխազիայի պարագայում, Հարավային Օսիայի հետ նույնպես ՌԴ-ն ակտիվորեն ձևավորեց իրավապայմանագրային հենք, որում կարևոր տեղ զբաղեցրեց ռուսաստանյան ռազմակայան տեղակայելու հարցը:

2010 թ. ապրիլի 7-ին կողմերի միջև Մոսկվայում ստորագրվեց Հարավային Օսիայում միացյալ ռուսաստանյան ռազմակայանի մասին համաձայնագիրը, որով միացյալ ռուսաստանյան ռազմակայանի ռազմական կազմավորումները Հարավային Օսիայի Հանրապետության զինված ուժերի հետ համատեղ, երկու կողմերի այլ զորքերի, ռազմական կազմավորումների և մարմինների հետ փոխգործակցությամբ ապահովում են ՌԴ-ի և Հարավային Օսիայի Հանրապետության ինքնիշխանությունը և անվտանգությունը (հոդվ. 4)[34]:

Ի տարբերություն Աբխազիայի, Հարավային Օսիայի և ՌԴ-ի միջև զորքերի (ուժերի) Միացյալ խմբավորում ստեղծելու մասին համաձայնագիր չստորագրվեց, սակայն դրա փոխարեն Հարավային Օսիան

---

[31] Տե՛ս «Соглашение между Российской Федерацией и Республикой Абхазия об Объединенной группировке войск (сил) Вооруженных Сил Российской Федерации и Вооруженных Сил Республики Абхазия», https://www.szrf.ru/szrf/doc.php?nb=102&issid=1022017003000&docid=7 (մուտք՝ 25.08.2021):

[32] Տե՛ս **Лавров А., Черепанова А.** Пляжный заслон: 7-я военная база получит новые вооружения. Чем усиливают главный форпост России в Абхазии, https://iz.ru/1215154/ anton-lavrov-anna-cherepanova/pliazhnyi-zaslon-7-ia-voennaia-baza-poluchit-novye-vooruzheniia (մուտք՝ 10.10.2021):

[33] Տե՛ս «Указ Президента Российской Федерации о признании Республики Южная Осетия», http://www.kremlin.ru/acts/bank/27958 (մուտք՝ 25.08.2021):

[34] Տե՛ս «Соглашение между Российской Федерацией и Республикой Южная Осетия об объединенной российской военной базе на территории Республики Южная Осетия», https:// www.szrf.ru/szrf/doc.php?nb=102&issid=1022010012000&docid=5 (մուտք՝ 25.08.2021):

ավելի խորը ինտեգրվեց ՌԴ-ի հետ ռազմաքաղաքական հարաբերություններում:

2015 թ. մարտի 18-ին ՌԴ-ն և Հարավային Օսիան ստորագրեցին դաշնակցության և ինտեգրացիայի մասին պայմանագիր, որով կողմերը ձևավորեցին պաշտպանական և անվտանգային միասնական տարածք: Պայմանագրի համաձայն՝ Հարավային Օսիայի զինված ուժերի առանձին ստորաբաժանումներ և անվտանգության մարմիններ մտան ՌԴ զինված ուժերի և անվտանգության մարմինների կազմի մեջ[35]:

Հարավային Օսիայի նման քաղաքականությունը ռուսաստանյան վերլուծաբան Վ. Մուխանովը բացատրում է Հարավային Օսիայի աշխարհագրական դիրքով, սահմանափակ ռեսուրսներով և «բաժանված ժողովրդի» միավորման ուժեղ միտումով[36]:

Այսպիսով՝ 2021 թ. դրությամբ Հարավային Կովկասում ՌԴ ռազմակայաններ տեղակայված են ՀՀ-ում, Աբխազիայում, Հարավային Օսիայում: Այդ ռազմակայանները ներառված են ՌԴ Հարավային ռազմական օկրուգի կազմում: Հարավային ռազմական օկրուգի գլխավոր խնդիրն է ապահովել Ռուսաստանի հարավային սահմանների անվտանգությունը[37]:

Ամփոփելով նշենք՝ ռուսաստանյան ռազմակայանների ներկայությունը ՀՀ-ում, Աբխազիայում և Հարավային Օսիայում, իրենց առնչվող իրավապայմանագրային հենքի շրջանակում հնարավորություն են տալիս ՌԴ-ին ռազմաքաղաքական առումով ծանրակշիռ և անմիջական ներկայություն ապահովելու տարածաշրջանում և միաժամանակ ռազմաքաղաքական զարգացումներին արձագանքելու գործնական միջոցներ ունենալու, այլ կերպ ասած՝ ՌԴ-ն տարածաշրջանում որպես ռազմական տերություն շարունակում է պահպանել իր ներկայությունը՝ ընդգծելով, որ Հարավային Կովկասը շարունակում է համարել իր կենսական շահերի ոլորտը, որն անմիջական աղերս ունի ՌԴ անվտանգության ապահովման հետ:

ЖАК МАНУКЯН – ***Статус и военно-политическое значение военных баз Российской Федерации на Южном Кавказе (1995-2021 гг.).*** – В статье рассматриваются военно-политические задачи и значение российских военных баз, расположенных на территории республик Южного Кавказа за анализируемый период, а также договорно-правовые основы их размещения.

Обсуждается важность присутствия российской военной базы в РА в рамках двусторонних отношений и ОДКБ. Анализируются военно-политические причи-

---

[35] Տե՛ս «Договор между Российской Федерацией и Республикой Южная Осетия о союзничестве и интеграции», https://www.szrf.ru/szrf/doc.php?nb=102&issid=1022015012000&docid=5 (մուտք՝ 25.08.2021):

[36] Տե՛ս **Атасунцев А.** Абхазия хочет быть независимой. Почему Абхазия пока не стремится войти в состав РФ, https://www.gazeta.ru/politics/2016/11/03_a_10303547.shtml (մուտք՝ 30.08.2021):

[37] Տե՛ս «Южный военный округ», https://structure. mil.ru/structure/okruga/south/history.htm (մուտք՝ 30.08.2021):

ны вывода российских военных баз с территории Грузии и Азербайджана.

Рассматривается также ряд военно-политических и договорно-правовых вопросов, связанных с размещёнными в Абхазии и Южной Осетии российскими военными базами.

Ключевые слова: *Южный Кавказ, ОДКБ, российская военная база, договор, протокол, безопасность, суверенитет*

ZHAK MANUKYAN – *The Status and Military-Political Role of Russian Military Bases in the South Caucasus (1995-2021).* – The article addresses the role and military-political problems of Russian military bases in the South Caucasus republics in the given period, as well as the legal basis regarding the deployment of the abovementioned bases.

The article also touches upon the importance of the Russian military base in Armenia in both bilateral and CSTO frameworks. It analyses the military and political reasons for the withdrawal of Russian bases from Georgia and Azerbaijan.

The paper also explores a number of military-political and legal issues pertaining to the Russian military bases in Abkhazia and South Ossetia.

Key words: *South Caucasus, CSTO, Russian military base, agreement, protocol, security, sovereignty*